«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝	Երաժշտություն
Մասնակից՝	Լուսինե Ազիզյան
Ղեկավար՝	Խրիմյան Հռիփսիմե
Թեմա՝	Ազգային մշակութային արժեքների ձևավորումը «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում

2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....5

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ.....7

ԳԼՈՒԽ 2

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ.....11

ԳԼՈՒԽ 2.1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունն աշակերտի գեղարվեստական ու գեղագիտական դաստիարակման լավագույն միջոցն է: Այն հարստացնում է աշակերտի հոգևոր ներաշխարհը, ձևավորում է նրա սեփական վերաբերմունքը բարության, գեղեցկության նկատմամբ: Երաժշտությունն աշակերտին հաղորդակից է դարձնում համամարդկային արժեքներին և միաժամանակ նպաստում է ազգային գիտակցության ձևավորմանը: Երաժշտությունը, հուզական բնույթի հետ մեկտեղ, ունի նաև ճանաչողական գործառույթ և դրա ուսումնասիրումը նպաստում է ոչ միայն զուգորդական, այլ նաև տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ երաժշտությունն աշակերտին վարժեցնում է խմբային աշխատանքին, կարգ ու կանոնին, կարգապահությանը: Բացի այդ, որպես սեփական գիրն ունեցող հաղորդակցական լեզու, երաժշտությունն աշակերտի համար ստեղծում է ցանկացած հասարակության հետ շփվելու լայն հնարավորություններ:

Այսօրվա երաժշտության ուսուցիչը պետք է լինի ոչ միայն բազմակողմանի կրթված, գրագետ երաժիշտ-կատարող–խմբավար-հետազոտող, այլև մանկավարժ-դաստիարակ-մեթոդիստ: Նա պետք է երեխաներին երաժշտատեսական գիտելիքներ փոխանցելուց բացի,կարողանա զարգացնել նրանց երաժշտական ընդունակությունները, ստեղծագործական երևակայությունը, կատարողական հմտությունները, գեղեցիկի զգացողությունը, երաժշտությունն ընկալելու և արժևորելու կարողությունը:

Թեմայի արդիականությունը՝ Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը: Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Արդի աշխարհը գլոբալ զարգացումների, սրընթաց փոփոխությունների աշխարհ է. ոչ մի բան ապահովագրված չէ փոխվելու, հնանալու կամ վերանալու վտանգից, միայն ազգային բովանդակություն կրող ուսուցիչն է դառնում ժամանակի շունչը, այն ուսուցիչը որը դաստիարակում է հայրենիքին պիտանի անհատներ , ով պահպանում է ազգային մշակույթային ար-եքները և այն փոխանցում սերունդներին:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել «Երաժշտություն » առարկայի դասավանդման ընթացքում ազգային մշակութային արժեքների ձևավորման կարևորությունը և դրա իրականացման կարևորույթունը սահմանել՝ համապաբասխամ մեթոդներով և միջոցներով:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական, գիտամեթոդական գրականությունը,
- Սահմանել հստակ քայլարշավ և առաջնորդվել դրանով,
- Հասկանալ, թե ինչպիսի ազգային մշակութային արժեքներ կձևավորի «Երաժշտություն » առարկա դասավանդող ուսուցիչն իր առարկայի դասավանդման շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայ ժողովուրդն ունի շատ հին և հարուստ մշակույթ: Երբ ասում ենք մշակույթ, առաջին հերթին հասկանում ենք այն ամենը, ինչ երկար դարերի ընթացքում ստեղծել է ժողովուրդը: Օրինակ՝ եկեղեցիները, խաչքարերը, հուշարձանները, մագաղաթյա ձեռագրերը, ամրոցները, կամուրջները, ազգային երգն ու պարը և այլն:

Մշակութային արժեքներ ստեղծվում են նաև այսօր՝ մեր օրերում: Դրանք, օրինակ, շատ գեղեցիկ գորգերն են, ոսկե կամ արծաթե իրերը, հուշարձանները, նորովի են ներկայացնում հայկական երգն ու դրա ներքո ավանդական պարերը և այլն:

Հայկական ժողովրդական երաժշտությունը սկիզբ է առնում հին ժամանակներից: Նրա գիտականորեն նկատելի պատմություն ունի ավելի քան երեք հազարամյակ: Այս գործընթացը սկսել է ծնվել արդեն մ. թ. ա. 20-18-րդ դարերում:

Հայկական լեռնաշխարհի տարածքում (աշխարհագրական և քաղաքակրթական-մշակութային արեալում, որի սահմաններում ընթանում էր հայ ազգի էթնոգենեզը) հայտնաբերվել են բազմաթիվ արտեֆակտներ, որոնք վկայում են այն մասին, որ երաժշտարվեստն այստեղ բարգավաճել է մ.թ.ա. առնվազն երկրորդ հազարամյակից:

Նման արտեֆակտներ են հնագետների հայտնաբերած հնադարյան երաժշտական գործիքները, ինչպես նաև նվագող մարդկանց տարբեր պատկերները (այդ թվում՝ ժայռապատկերները) և հին գրավոր (հիմնականում՝ սեպագիր) հուշարձանները, որոնք պատմում են այս կամ այն իրադարձությունների, արարողությունների և գործողությունների մասին, որոնք ուղեկցվում էին երաժշտությամբ:

Հայ ժողովրդական երաժշտության ինքնատիպ գծերը ձևավորվել են նրա ծոցում Բալկանյան և արևմտաատոլիական երաժշտական ավանդույթների մշտական խաչաձևման շնորհիվ ՝ Մերձավոր Արևելքի այնպիսի հնագույն մշակույթների երաժշտական ավանդույթներով, ինչպիսիք են խեթական, արամեական, ասսիրո-բաբելոնյան և պարսկական, ինչպես նաև նրա լիակատար

ձուլման արդյունքում՝ իր ժամանակի համար առաջավոր Ուրարտու պետության մշակույթը :

Հին հայկական ժողովրդական երաժշտության հիմնական (վոկալ, գործիքային, խառը) ժանրերի և տեսակների մեջ, ըստ դրանց կիրառական գործառույթների (պաշտամունքային և սոցիալական նշանակության) բնույթի, կարելի է առանձնացնել ծիսական, օրացուցային, աշխատանքային, հարսանեկան, զինվորական, էպիկական, պարային, խնջույքային, քնարական-սիրային, օրորոցային, կենցաղային, խաղային, թաղման և այլ երգեր[1]:

Հայ ժողովրդական երաժշտության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում գյուղացիական երգերը, որոնք ներառում են վարելահող հորովելներ, ինչպես նաև «Անտունի» ժանրին վերաբերող սկիտալցիների (պանդուխտներ) երգերը[2]:

Մեր հարուստ ազգային մշակույթը պահպանելու և սերունդներին փոխանցելու լավագույն միջոցն է հանրակրթական դպրոցներում անդրադառնալ ամեն դրվագին և արժեքին , կարևորել և սվորողներին ներկայացնել այն ինչի կրողն իրենք են:

---

[1] Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, 160 էջ:

[2] Վիկիպեդիա, Ազատ հանրագիտարան, Հայկական ազգային երաժշտություն - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին սրանից տասնամյակներ առաջ, այսօր էական արժեք չեն ներկայացնում: Ժամանակի ընթացքում հայացքները, կարծիքները, արժեքները փոփոխվում են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ

առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Բնական է, որ ծնողների կողմից ընդունված հասարակական կյանքի նորմերը տարբերվում են հաջորդ սերնդի հայացքներից, որից էլ կարող են առաջանալ միջսերնդային հակասություններ: Դրանից անջրպետ է առաջանում երկու սերունդների սոցիալական չափանիշների ու արժեքների միջև, և կրտսեր սերունդը կարող է բացասական վերաբերմունք դրսևորել ավագ սերնդի արժեքների և հայացքների նկատմամբ: Այստեղ մեծ անելիք ունի ավագ սերունդը: Ընտանիքի առջև ծառացած խնդիրներից մեկը պահանջում է սերունդների վրա գաղափարական ազդեցության տարբեր ձևերի ու միջոցների խելացի գործադրում, որի համար անհրաժեշտ է օգտագործել նախորդ սերունդների՝ անցյալում կուտակված արժեքավոր փորձը, մասնավորապես ազգային ավանդույթները:

Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ և դպրոց է մտնում որոշակի արժեհամակարգ ձեռքբերելու համար , առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է ԶԼՄ–ների դերը, որոնցից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի վրա: Եթե երեխայի ներկայությամբ ծնողը խրախուսում է ԶԼՄ–ների կողմից քարոզվող բացասական երևույթները, այդ դեպքում նմանատիպ սոցիալական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծ է լինում, և ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է նմանատիպ հաղորդումները , ֆիլմերը, երաժշտությունը ապա հնարավոր է՝ բացասական սոցիալական դիրքորոշումներ չձևավորվեն:

Այսօր գիտության, կրթության և տեխնիկայի զարգացումը թելադրում է բարոյական արժեքների գլոբալացման գործընթացին բնորոշ երանգավորում: «Գլոբալացումը պայմանավորված է ժամանակակից աշխարհի զարգացմամբ: Այն պետք է դիտարկել ոչ միայն որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, կրթական, էկոլոգիական, այլ նաև միջազգային ինտեգրման

գործընթաց, որի արդյունքում մարդկությունը դառնում է միասնական և փոխկապակցված: Կրթության գլոբալացման առաջընթացին խոչընդոտում են այնպիսի որոշակի պատճառներ, ինչպիսիք են ազգային ավանդույթները, կրթության ազգային համակարգի յուրահատկությունը, տվյալ երկրում ազգային կրթության սոցիալ–տնտեսական, քաղաքական, մշակութային պայմանները և այլն»[1] :

Ժամանակակից գլոբալացումն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն է ունենում մարդու արժեհամակարգի վրա: Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ–մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանեցվում ազգային առանձնահատկություններին, որով

[1] Տե՛ս Мардоян Р. А., Педагогическая аксиология, Гюмри, Элдорадо, 2012, ст. 202.

էլ խանգարում են ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես երեխայի դաստիարակությանը:

Այսօր հասարակություն են ներթափանցել մեր ազգին ոչ հարիր արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը:

Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը: Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը մշակել է իր վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ, քանի որ այն հայերի համար մեծագույն սրբություն է և սոցիալական կյանքի հիմք: Ընտանիքը սերտորեն կապված է պետության և հասարակության զարգացման հետ: Այն շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր դրական և բացասական

փոփոխություններին: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ–տնտեսական իրականության հետ: Նրա դրսևորման հիմքերից մեկը ընտանիքի կենցաղավարման միջավայրն ու փոփոխվող սոցիալ–քաղաքական պայմաններն են: Այս առումով կարևոր նշանակություն ունի ընտանեկան կենցաղում տեղ գտած մի շարք սովորույթների ծագման, պատմական զարգացման ընթացքում դրանց փոփոխությունների, կենցաղավարման ձևերի բացահայտումը[1]:

Այն առավել կարևորվում է արդի պայմաններում, երբ ավանդույթներից շատերը դուրս են մղվել կենցաղից, երգերն էլ ենթարկվել են փոփոխությունների:

Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից: Ընտանիքի հիմնական նպատակը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում վարքագծային նորմեր, իրականացվում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին, լսում կամ չի լսում ազգային երգեր: Հասարակության նորմերը, արժեքները, սովորույթները,երաժշտությունը, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության մեջ: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը: Սակայն այսօր խիստ նվազել է ընտանիքի դերն ու նշանակությունը: Երիտասարդները ձգտում են նախ կայանալու, մասնագիտանալու և նոր միայն մտածելու ընտանիք կազմելու մասին: Նրանք խուսափում են պատասխանատվություն կրելուց և փախչում են ընտանեկան խնդիրներից: Պետք է

[1] Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991, 149 էջ:

բոլոր ջանքերը ուղղված լինեն ընտանեկան համակարգերի վերականգնմանը, ընտանիքի մշակույթը հասկանալու, ծնողների մանկավարժական մշակույթը և կրթական ներուժը բարելավելուն:

ԳԼՈՒԽ 2

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Երաժշտության դասավանդման նպատակն է.

• աշակերտին ձևավորել որպես կիրթ, կուլտուրական մարդու՝ երաժշտության ոլորտում նրան համապատասխան գիտելիք տալու ճանապարհով,

• աշակերտի գեղարվեստական–երաժշտական դաստիարակումը՝ ժողովրդական ու դասական երաժշտության նմուշներին ծանոթացնելու ճանապարհով,

• նրա ներգրավումը ստեղծագործական գործունեության մեջ և դրա համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացումը:

Հանրակրթական դպրոցում «Երաժշտություն» առարկան նախատեսում է աշակերտին ընդհանուր և ոչ թե մասնագիտական գիտելիքի հաղորդում: Բոլոր երեխաները տարբեր երաժշտական տվյալներ ունեն, դրա համար դասընթացի բազմազան ուղղություններն աշակերտին հնարավորություն են տալիս զարգացնելու և ի հայտ բերելու սեփական հետաքրքրությունները :

Երաժշտության զուգորդական բնույթը նպաստում է այդ առարկայի ինտեգրմանն այլ գիտական ճյուղերին, օրինակ՝ տեսողական, թատերական արվեստին, պարին, պոեզիային, գեղարվեստական գրականությանը, պատմությանը, մաթեմատիկային, ինֆորմատիկային, ֆիզիկային և այլն, ինչը գրավչություն է

ընձեռում ուսումնական գործընթացին: Երաժշտության դասերն արդյունավետ կազմակերպելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է տիրապետել այնպիսի մեթոդիկայի, որի կիրառմամբ հնարավոր է արթնացնել երեխայի հետաքրքրասիրությունը երաժշտության հանդեպ: Այս հարցի առջև են կանգնած մեր երաժիշտ մանկավարժները: Այսօր դպրոցներում նրանք հետամուտ են հետևյալ հարցի լուծմանը. ***«Ինչ և ինչպես սովորեցնել աշակերտին»:*** Սակայն «Ինչով և ինչպես հրապուրել սովորողին» հարցն անգամ չեն էլ բարձրացնում:

Երաժշտությանը, որպես դպրոցական ուսուցման առարկայի, առաջին հերթին պետք է մոտենալ որպես արվեստի՝ մարդու կողմից արարված ստեղծագործության, այլ ոչ թե որպես ուսումնասիրության ենթակա գիտաճյուղի: Երաժշտության դասերը, չմերժելով խմբերգային երգեցողության կարևորությունը և ազգային ավանդույթներն այդ բնագավառում, իրենց առջև դնում են առավել լայն խնդիրներ. ներգրավել աշակերտներին երաժշտական արվեստի մեծ աշխարհում, սովորեցնել նրանց սիրել և հասկանալ երաժշտությունը՝ իր տեսակների, ժանրերի և ձևերի բազմազանությամբ, այլ խոսքով՝ դաստիարակել աշակերտների մեջ երաժշտական մշակույթ՝ որպես հոգևոր մշակույթի մի մաս :

«Երաժշտություն» առարկայի գրեթե բոլոր ծրագրերի հիմքում դրված են երեք հենակետեր՝ երգ, պար, քայլերգ: Սրանք են այն հիմնական ոլորտները, որոնցից յուրաքանչյուրի մասին կարելի է ասել «բնագավառ», «ժանր», «ձև», «բնույթ»: Այս երեք տեսակները հնարավորություն են տալիս մեծ երաժշտական արվեստի նմուշները ներառել երաժշտության դասերի մեջ՝ ապահովելով երաժշտության սերտ կապը կյանքի հետ: Հենվելով այդ «երեք կետերի» վրա՝ առաջին դասարանցին անմիջապես ընկղմվում է երաժշտական աշխարհի այդ երեք գրավիչ խորաններում: Հենվելով այդ «երեք կետերի» վրա՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում աննկատ, առանց հատուկ ջանքերի երեխաներին տանել ցանկացած բարդ երաժշտական արվեստի բնագավառ՝ օպերա, բալետ, սիմֆոնիա, կանտատ: Ըստ երաժշտության ուսումնական պլանի՝ հանրակրթական դպրոցի երեք աստիճաններում էլ նախատեսված է երաժշտության դասավանդումը. տարրական ու բազային աստիճանում՝ պարտադիր, իսկ միջնակարգ աստիճանում՝ կամ ընտրական

առարկաների տեսքով: Տարրական աստիճանում առանձնապես մեծ է երաժշտության առարկայի կարևորությունը, երբ դեռևս ամբողջովին չեն դրսևորվել երեխայի բնածին, բնական կարողությունները, բնազդները, և անհրաժեշտ է բացահայտել, առաջնորդել դրանք: Երեխայի համար հարազատ տարբեր զվարճալի ակտիվությունների միջոցով տեղի է ունենում նրա հետաքրքրումը երաժշտությամբ: Այս աստիճանում երաժշտության առարկան նախատեսում է կիրարկել աշակերտների ստեղծագործական կարողությունները, նրանց ընդգրկել համատեղ ստեղծագործական գործընթացներում և հաղորդել տրված աստիճանում նախատեսված գիտելիքները: Բազային աստիճանում երաժշտության դասաժամերին ձեռք բերած գիտելիքը և կարողություններն ու հմտությունները դեռահասի համար դյուրին են դարձնում սեփական անձի որոնման և ինքնահաստատման գործընթացը: Դա դեռահասի զարգացման ու նրա հետաքրքրությունները ճիշտ կառավարելու լավագույն միջոցն է, և զգալիորեն կմեղմացնի այն քննադատական վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ, որը կարևոր է այդ տարիքի համար: Պետք է նկատի առնել նաև այն, որ արվեստի ստեղծագործությունը հասկանալու կարողությունը ենթադրում է նաև տարբեր կարծիքների և աշխարհայացքների նկատմամբ հանդուրժողականություն:

Միջնակարգ աստիճանում աշակերտին հնարավորություն է տրվում, սեփական հետաքրքրությունների համաձայն, ընտրել առաջարկված դասընթացներից մեկը:

Երաժշտության դասավանդումը տարածվում է երեք ուղղությամբ.

1. գործնական կարողություններ ու հմտություններ,

2. հաղորդակցություն, մեկնաբանություն,

3. երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում:

Բոլոր ուղղությունների շրջանակներում դասավանդումն ընթանում է զուգահեռաբար ու սերտ փոխկապակցված:

Գործնական կարողություններ ու հմտություններ

Այս ուղղության շրջանակներում աշակերտները ձեռք են բերում և ձևավորում են գործնական հմտություններ, որոնք ծառայում են նրանց ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու կիրարկմանը: Աշակերտները հաղորդում են լսած երաժշտական ստեղծագործությունների հուզական ու տեսական բովանդակությունը կամ իրենց շրջապատում ստացած երաժշտական տպավորությունները: Դրա համար ընտրում և գործածում են արտահայտման պատշաճ ձևերն ու արտահայտչամիջոցները, որոնց հետ ծանոթացել են երաժշտության դասաժամին: Բացի այդ, երաժշտության դասաժամին աշակերտներն սկսում են տիրապետել ծրագրման, կազմակերպման, խմբային աշխատանքի հմտություններին:

Հաղորդակցություն, մեկնաբանություն

Երաժշտությունը, որ ճանաչված է որպես հաղորդակցական լեզու, բազմապիսի ու բազմակի մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Այս ուղղության շրջանակներում աշակերտները սովորում են երաժշտություն լսել, գնահատել, բանավեճի, քննարկման ժամանակ՝ պատշաճ գրագետ լեզվով ու վարվելակերպի նորմերի պահպանությամբ, հստակորեն արտահայտել միտքը, հիմնավորել սեփական հայեցակետը, սկսում են տիրապետել նաև կոլեկտիվ աշխատանքի մեթոդներին, զարգանում է նրանց գնահատման և ինքնագնահատման կարողությունը: Աշակերտները ներկա են գտնվում ու մասնակցում են տարբեր միջոցառումների: Սովորում են, որ երաժշտական արվեստի ստեղծագործությունը միշտ արտահայտում է որոշակի գաղափար:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Այս ուղղության շրջանակներում աշակերտները տեղեկատվություն են ստանում լսած ստեղծագործությունների՝ հայ (ժողովրդական ու մասնագիտական) ու համաշխարհային երաժշտության մշակույթի հայտնի նմուշների մասին, և դրանք կապում են մշակութային ու պատմական համատեքստի հետ: Այդ տեղեկատվությունը տարբեր եղանակներով առնչվում է ամենօրյա իրադարձությունների հետ, աշակերտների փորձառության հետ: Նրանք ծանոթանում են հայ ու համաշխարհային երաժշտական մշակույթի ներկայացուցիչների՝

կոմպոզիտորների ու կատարողների, երաժշտական գործիքների, տարբեր երաժշտական կոլեկտիվների հետ։

ԳԼՈՒԽ 2.1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

Հանրակրթական դպրոցի սովորողների կրթության և դաստիարակության ասպարեզում ինչպես գրականությունն ու կերպարվեստը, երաժշտությունը նույնպես նրանց հոգևոր աշխարհը ձևավորող հզոր միջոց է։ Ներկայացնենք տարրական դասարաններում «Երաժշտություն» առարկայի դասավանդման թեմատիկ պլանավորման նմուշօրինակ ։

Թեմա՝ «Ինչպե՞ս ունկնդրել ազգային երաժշտությունը»

Ինչ է նշանակում ունկնդրել ազգային երաժշտություն՝ խորասուզվել դրա հնչյունների մեջ, բացահայտել բազմապիսի մտքեր, որոնք վերաբերում են մարդկային պարզագույն կենցաղին, տարբերել, ճանաչել ու գնահատել երաժշտական հյուսվածքների տարրերը, հպվել, ապրումակցել, հետևել մարդկային հոգու տվայտանքներին և իհարկե բացահայտել ազգային շեշտադրումները։ Երաժշտության ունկնդրմամբ մարդկային հոգեվիճակների փոփոխություններին հետևելն արվեստ է. գոյություն ունի ուրախության, տխրության, տագնապի ու այլ բնույթի երաժշտություն։

Թեմայի զարգացում

Երաժշտական ստեղծագործության ակունքը մանկությունն է՝ կյանքն իր բոլոր իրավիճակներով, հարաբերություններով, զգացմունքների արտահայտմամբ՝ վարքով, բազմապիսի ուրախություններով ու տխրություններով, հումորով, խաղերով։ Այդ ամենն արտացոլված է կոմպոզիտորների ստեղծագործություններում։

Թեմայի գագաթնակետը

Երաժշտությունն ունի անսահմանափակ հնարավորություններ՝ մարդու ներաշխարհի և նրան շրջապատող երևույթների արտացոլման համար։ Այն ի զորու է նկարագրելու, փոխանցելու մարդկային հոգու տարբեր իրավիճակներ և այլն։ Երաժշտական լեզվի յուրացմանն ուղղված առաջին քայլերը մեղեդու «բնույթ», «տեմպ», «ռիթմ», «հնչերանգ» հասկացությունների մեկնաբանումն ու դրանց ամփոփումն են՝ գեղարվեստական խոսքի, նկարի, գծի և գույնի նմանությամբ և օրինակներով (ձմեռ–գարուն՝ բնության և կյանքի օրինաչափ նորացում, այդ իրավիճակների արտացոլումը երաժշտության մեջ. ծեսեր, խաղեր, տարբեր ազգերի երգեր, պարեր)։

Թեմայի ամփոփում

Ունկնդրած և հնչող երաժշտության շուրջ մտորումներ կատարելիս հարկավոր է երեխաների ուշադրությունը բևեռել այն գաղափարին, թե ինչ է երաժշտությունը։ Երաժշտությունը ներթափանցում է երեխայի առօրյան՝ ժողովրդական երգի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ա. Լուսինյանի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների տեսքով։ Երեխայի մտքին ու հոգուն պետք է հասցնել, որ այս մեծանուն մարդկանց համար երաժշտություն հորինելը կյանքի իմաստն է և ապրելու կերպը։

Ներկայացնենք նաև չորրոդ դասարանում «Երաժշտություն» առարկայի դասավանդման թեմատիկ պլանավորման նմուշօրինակ։

Չորրորդ դասարանում աշակերտները ծանոթանում են ***«Իմ ժողովրդի երաժշտությունը և «Երաժշտությունը սահմաններ չի ճանաչում»*** թեմաներին։ Այդ թեմաները աշակերտների մեջ սեր և հետաքրքրություն են արթնացնում դեպի հայրենի երկիրը, սեփական ժողովուրդը, դաստիարակում ազգային արժանապատվության զգացում, հարգանք հանդեպ հայրենի երկրի պատմությունը, մշակույթը, ազգի հոգևոր արժեքները։

Սեփական երաժշտական մշակույթի իմացությունից դեպի համամարդկայինի ճանաչումը հնարավորություն է ստեղծում աշակերտներին հարգալից և

բարյացակամ վերաբերմունք ունենալ նաև աշխարհի մյուս ժողովուրդների արվեստի հանդեպ։

Թեմա՝ «Իմ ժողովրդի երաժշտությունը»

Աշակերտները ծանոթանում են հայ ժողովրդական և կոմպոզիտորական երաժշտության նմուշներին, որը նրանց մեջ ձևավորում է ինքնուրույն կարծիք ու վերաբերմունք ազգային երաժշտության նկատմամբ։ Ծանոթանում են դարերից եկող ժողովրդական երգին, երաժշտությանը և հայ հինավուրց ազգային ծիսական տոնակատարություններին։ Աշակերտները հասկանում են, որ պետք է լավ իմանալ ազգային երաժշտությունը, որն ամենալավ «բանալին» է համաշխարհային երաժշտական արվեստը հասկանալու և գնահատելու համար։

Թեմայի զարգացում

Երկար տարիների մանկավարժական փորձս վկայում է, որ հայրենասիրական երգերը ամենաբուռն արձագանքն են գտնում երեխաների մոտ։ Այս տարիքում երեխաները գրեթե միաբերան անգիր գիտեն մեր ճանաչված և սիրված հայրենասիրական երգերը, երգեր նվիրված զինվորին, հայրենիքին, մայրաքաղաքին և այլն։ Հաշվի առնելով, որ օրեցօր ավելանում է հայրենիքին նվիրված տարբեր ոճի և որակի քանակը՝ թեմայի դասավանդման առանցքային խնդիրն եմ համարում աշակերտներիս մոտ զարգացնել հայկական ժողովրդական և կոմպոզիտորների երաժշտության տարբերությունները զգալու և բնութագրելու կարողությունը, ծանոթացնել նրանց հայ մեծ կոմպոզիտորների (Կոմիտաս, Ա. Խաչատրյան) կյանքին և ստեղծագործական գործունեությանը, ծանոթացնել հայկական ժողովրդական նվագարաններին և դրանց հնչողությանը։

Թեմայի գագաթնակետ

Երգեցողության համար առարկայի դպրոցական ծրագրից ընտրում եմ համապատասխան երգեր՝

«Մեր սիրելի Երևան» – երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի, խոսք՝ Ա. Սահակյանի,

«Հայր մեր» – տերունական աղոթք, մշակ.՝ Կոմիտասի,

«Դու իմ Երևան» – երաժշտ.՝ Ռ. Գալստյանի, խոսք՝ Ի. Գալստյանի,

«Ամեն սազի մեջն գոված» – Սայաթ–Նովա,

«Գովենք, ընկե՛ր, ուրախ սազով» – երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի, խոսք՝ Ա. Գրաշու և այլն։

Երգերը լսում ենք, երգում միասին, ընթացքում տրվում են համապատասխան բացատրություններ կապված հայկական ժողովրդական երգերի երգչային ձայնածավալի, նոտաների ընկալման և արտաբերման հետ։ Այս թեման ուսուցանելիս անհրաժեշտ եմ համարում՝

- զարգացնել երգչային ձայնածավալը՝ 1–ին սոպրանո՝ դո–րե2 /մի2/, ալտ՝ /սոփ/լափ–սի /դո2/,

- զարգացնել հայ ժողովրդական, հոգևոր և աշուղական երգերը մաքուր ինտոնացիայով և արտահայտիչ կատարելու կարողություն,

- զարգացնել նոտաներով երկձայն երգեր կատարելու կարողությունը,

- զարգացնել հայկական, այլ ազգերի և ժամանակակից պարեր կատարելու կարողությունը,

- զարգացնել առաջադրված խոսքերով և ռիթմով պարային, քայլերգային և երգային մեղեդիներ ստեղծելու կարողությունը,

- ծանոթացնել տասնվեցերորդական տևողության նոտայի գրությանը։

Թեմայի ամփոփում

Թեման ամփոփելիս միանգամից երկու հիմնահարց եմ բարձրացնում իմ և աշակերտներիս առաջ՝ նախ ամրապնդել ձեռք բերած երաժշխտական գիտելիքները, կարողանալ կապել դրանք նախորդ դասերին յուրացրածի հետ և գտնել տրամաբանական կապ, ապա՝ սիրել ազգային երաժշտությունը, ճանաչել և գնահատել մեր մեծերի ժառանգությունը, ճիշտ վերարտադրել այն և չաղավաղել անգրագետ մոտեցմամբ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Երաժշտությունն աշակերտի գեղարվեստական ու գեղագիտական դաստիարակման լավագույն միջոցն է:
- Երաժշտությունը հարստացնում է աշակերտի հոգևոր ներաշխարհը, ձևավորում է նրա սեփական վերաբերմունքը բարության, գեղեցկության նկատմամբ:
- Երաժշտությունն աշակերտին հաղորդակից է դարձնում համամարդկային արժեքներին և միաժամանակ նպաստում է ազգային գիտակցության ձևավորմանը:
- Երաժշտությունը, հուզական բնույթի հետ մեկտեղ, ունի նաև ճանաչողական գործառույթ և դրա ուսումնասիրումը նպաստում է ոչ միայն զուգորդական, այլ նաև տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ երաժշտությունն աշակերտին վարժեցնում է խմբային աշխատանքին, կարգ ու կանոնին, կարգապահությանը:
- Որպես սեփական գիրն ունեցող հաղորդակցական լեզու, երաժշտությունն աշակերտի համար ստեղծում է ցանկացած հասարակության հետ շփվելու լայն հնարավորություններ:
- Երաժշտությանը, որպես դպրոցական ուսուցման առարկայի, առաջին հերթին պետք է մոտենալ որպես արվեստի՝ մարդու կողմից արարված ստեղծագործության, այլ ոչ թե որպես ուսումնասիրության ենթակա գիտաճյուղի:
- Երաժշտության դասերը, չմերժելով խմբերգային երգեցողության կարևորությունը և ազգային ավանդույթներն այդ բնագավառում, իրենց առջև դնում են առավել լայն խնդիրներ. ներգրավել աշակերտներին երաժշտական

արվեստի մեծ աշխարհում, սովորեցնել նրանց սիրել և հասկանալ երաժշտությունը՝ իր տեսակների, ժանրերի և ձևերի բազմազանությամբ, այլ խոսքով՝ դաստիարակել աշակերտների մեջ երաժշտական մշակույթ՝ որպես հոգևոր մշակույթի մի մաս ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991։

Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011,

Հայկական ազգային երաժշտություն - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

«Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Եր., 2020։

Мардоян Р. А., Педагогическая аксиология, Гюмри, Элдорадо, 2012,